«Հիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան»

Շրջաբերական նամակ

Դեկտեմբեր 2016

Էվալդ Ֆրանկ

Սրտանց ողջունում եմ ողջ աշխարհի բոլոր եղբայրներին և քույրերին մեր Տեր Հիսուս Քրիստոսի սուրբ և թանկագին Անունով, 1 Կորնթ. 4:1-2 խոսքերով. *«Թող ամեն մարդ մեզ այդպես համարի՝ ինչպես Քրիստոսի սպասավորներ և Աստծո խորհուրդների տնտեսներ: Արդ, տնտեսներից այն է պահանջվում, որ յուրաքանչյուրը հավատարիմ լինի»*: Այդպես են ներկայանում Պողոսն ու Քրիստոսի ճշմարիտ սպասավորները:

Ի՜նչ առանձնաշնորհում է Տիրոջ կողմից դրված լինել ծառայության մեջ (1 Տիմ.1:12): Ի՜նչ առանձնաշնորհում է հաղորդել Աստծո խորհուրդ-ները, որոնք մի ժամանակ հաղորդվել են առաքյալների միջոցով, հիմա Բրանհամ եղբոր միջոցով և բացահայտվել են մեզ համար Սուրբ Հոգով: Ի՜նչ առանձնաշնորհում է վերջին պատգամը տանել ողջ աշխարհում. ոմանց կոչ անելու, որ դուրս գան, մյուսներին՝ վկայություն տալու համար:

Քրիստոսի վերադարձից առաջ ամենակարևոր պատգամը սա է. *«Ահա փեսան գալիս է, դուրս եկեք նրան դիմավորելու»* (Մատթ.25:6): Հովհան-նես առաքյալը, որը ստացել է վերջին ժամանակների հայտնությունը, գրել է. *«Երանելի են Գառան հարսանիքի ընթրիքին կանչվածները»: Եվ ինձ ասաց. «Սրանք Աստծո ճշմարիտ խոսքերն են»* (Հայտն. 19:9): Ամեն:

Այս առակը բառացիորեն վերաբերում է մեր ժամանակներին. *«Այն ժամանակ երկնքի թագավորությունը պիտի նմանեցվի տասը կույսերի, որոնք վերցրին իրենց լապտերները և դուրս եկան փեսային դիմավորելու»* (Մատթ. 25:1):

Այդ առակում Տերն Ինքը կանխասել է, որ տասը կույսերից միայն հինգը, Փեսայի վերջին կանչը լսողների միայն կեսն են պատրաստ լինելու և մտնելու հարսանիքի սրահը:

Երբ Փեսան գա տանելու Իրեններին, կկատարվի այս խոսքը. *«Այն ժամանակ արտում երկու մարդ կլինեն. մեկը կվերցվի, իսկ մյուսը՝ կթողնվի: Եվ մի ջրաղացում երկու կին աղալիս կլինեն. մեկը կվերցվի, իսկ մյուսը՝ կթողնվի»* (Մատթ.24:40,41): Մեկը կհափշտակվի, մյուսը կմնա:

Տասը կույսերը գնում են Փեսային դիմավորելու: Հինգը պատրաստ են և մտնում են հարսանիքի սրահը, մյուս հինգը հայտնվում են փակ դռան առջև: Եվ նորից հնչում է հրատապ հորդորը. *«Արդ, արթուն կացեք,*

որովհետև չգիտեք, թե ձեր Տերը որ ժամին կգա» (Մատթ. 24:42): Նաև՝ *«Դրա համար դուք էլ պատրաստ եղեք, որովհետև Մարդու Որդին կգա այն ժամին, երբ դուք չեք սպասում»* (Մատթ.24:44):

Չգիտենք, թե իրականում քանի հոգի կլինեն, բայց Տիրոջ ասածի համաձայն միայն կեսը իսկապես հավատարիմ կմնան մինչև վերջ և կմասնակցեն հարսանյաց խնջույքին: Այնուամենայնիվ Աբրահամին տրված Աստծո խոստման համաձայն (Ծննդոց 15:5-6, Ծննդոց 22:15-18) Ադամից սկսած բոլոր սերունդների փրկագնվածները անթիվ բազմություն կլինեն, երկնքի աստղերի նման (Հռոմ. 4:18):

Մատթ. 24-րդ գլխում թվարկված են մի շարք բաներ, որոնք կատարվելու են Քրիստոսի երկրորդ գալստից առաջ: Խոսվում է բնական աղետների, պատերազմների, երկրաշարժերի և սովի մասին, ինչպես նաև սուտ քրիստոսների և սուտ մարգարեների: Ավետարանի մասին ասվում է. *«Եվ արքայության այս Ավետարանը ամբողջ տիեզերքում կքարոզվի՝ բոլոր ազգերին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը»* (Մատթ.24:14):

Մեր ժամանակների համար տրված նշանը, որը տեսանելի է բոլոր աչքերին, Իսրայելի վերադարձն է, թզենու առակի համաձայն (Մատթ. 24:32): Եզեկիել 11:17-ում Աստված արդեն խոստացել էր. *«Այդպես էլ դուք. երբ այս ամենը տեսնեք, իմացեք, որ մոտ է, դռներին է»* (Մատթ. 24:33):

Դրա համար մեր Տերն ասում է Մատթ. 24:33 համարում. *«Այդպես էլ դուք. երբ այս ամենը տեսնեք, իմացեք, որ մոտ է, դռներին է»*:

Մինչդեռ աշխարհում իրավիճակը կլինի Սոդոմի և Գոմորի նման և Նոյի ժամանակների նման (Մատթ. 24, Մարկոս 13): Արագ աճող կլիմայական փոփոխությունները, գլոբալ տաքացումը և դրանց հետևանքով եղանակային վատ պայմանները վախեցնում են մարդկանց, ինչպես գրված է. *«... երկրի վրա ազգերը խռովությամբ կտագնապեն, ինչպես ծովի ալեկոծումի գոչյունից»* (Ղուկ.21:25):

Հոգևոր ոլորտում իրականանում է Մատթ. 24:45-47 համարներում գրվածը: Հոգևոր կերակուրը բաժանվում է ճիշտ ժամանակին և անմիջական կապ ունի աստվածաշնչյան վարդապետության հետ. *«... սնված հավատի խոսքերով ու այն բարի վարդապետությամբ, որին հետևեցիր»* (1 Տիմ.4:6): Տիրոջ կողմից ուղարկվածը գիտի իր կանչվելու օրն ու ժամը և ջանասիրությամբ անում է այն, ինչ իրեն հանձնարարվել է: Չար ծառան (48-51 հհ.) ինքն իրեն է նշանակել, նա հանձնարարություն չի

ստացել և չի կարող վկայել իր կանչվելու մասին: Խառնաշփոթություն և խառնուրդ չի կարող լինել: Դեռ երբեք ճշմարիտ ծառան սուտ ծառա չի դարձել, հավատարիմ ծառան չար ծառա չի դարձել: Մովսեսը երբեք Բաղաամ չի դարձել, Աբելը երբեք Կայեն չի դարձել:

Դրանից անմիջապես հետո տասը կույսերի առակն է Մատթ. 25:1-13 համարներում: Այնտեղ գրվածը հիմա է կատարվում, մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը: Իմաստուն կույսերը վառված ճրագներ ունեն, և յուղ՝ իրենց ամաններում: Հիմար կույսերի ճրագները հանգչում են յուղի՝ Հոգու պակասությունից, և նրանց ասվում է. «Գնացեք և գնեք վաճառականներից, որոնք խոսում են Սուրբ Հոգու մասին իրենց հավաքույթներում»: Իմաստուն կույսերը ոչ մի բանով չեն խաբվում, նրանք կմտնեն հարսանիքի սրահը որպես անբիծ Հարս, և դուռը կփակվի: Նրանց համար իրականանում է այս խոսքը. *«Եվ հույսը չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը մեր սրտերում սփռված է Սուրբ Հոգու միջոցով, որ մեզ տրվեց»* (Հռոմ. 5:5):

Հիմար կույսերը, որոնք նույնպես սպասում են Քրիստոսի վերադարձին և հափշտակությանը, հուսահատված կկանչեն. «Տե՛ր, Տե՛ր, բաց մեզ համար»: *«Իսկ Նա պատասխանեց և ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ես ձեզ չեմ ճանաչում»* (Մատթ. 25:12):

Աստծո համար խառնուրդ չկա ո՛չ երկնքում, ո՛չ երկրի վրա: Ամեն սերմ պտուղ է տալիս իր տեսակի պես: Աստծուն կտեսնեն միայն սրտով մաքուրները, փառքի մեջ կմտնեն միայն խոստացված Հոգով (Գործք 2:38) լցվածները և Սուրբ Հոգով կնքվածները (Եփես. 1:13): *«Եվ ոչ մի անմաքրություն նրա մեջ բնավ չի մտնի, ոչ էլ պղծություն ու ստություն կատարողը, այլ միայն նրանք, ովքեր գրված են Գառան կյանքի գրքի մեջ»* (Հայտն.21:27):

Մեր ժամանակներում, ինչպես առաքյալների ժամանակներում է եղել, հնչում են երկու բան՝ նախ Խոսքը, հետո՝ մեկնությունները: *«Եվ հենց ձեր միջից մարդիկ վեր կկենան, որոնք սխալ բաներ կխոսեն, որպեսզի աշակերտներին իրենց հետևից քաշեն»* (Գործք 20:30): Հիմար կույսերը կհավատան նաև մեկնություններին, մինչդեռ իմաստուն կույսերը կլսեն միայն բնօրինակ Խոսքը, կհավատան Խոսքին և կմնան Խոսքի մեջ:

Հաստատ է, որ սուտ ուսմունք բերողներից ոչ մեկը չի հափշտակվելու. *«Իսկ ով ձեր մեջ խռովություն է առաջացնում, իր դատապարտությունը կկրի՝ ով էլ լինի»* (Գաղատ. 5:10): Իսկ նրանք, ովքեր մոլորվելու են մեկնություններով, նույնպես չեն հափշտակվելու, որովհետև «ուղիղ ճանապարհը թողած՝ մոլորվել են» (2 Պետրոս 2:15):

Հայտնության գրքի սկզբում կարդում ենք. *«Երանելի են այս մարգարեության խոսքերը կարդացողները և լսողները, և* ***սրա մեջ գրվածները պահողները, որովհետև ժամանակը մոտեցել է»*** (Հայտն.1:3): Այն ամենը, ինչ գրված չէ Խոսքում, մեկնություններ են, որոնց չենք կարող հավատալ Հարս-Խոսքը լինելով, և անշուշտ, չենք կարող պահել:

Նույն նախազգուշացումը և նույն երանությունը գրված է նաև վերջին գլխում. *«Ահա շուտով գալիս եմ. երանի նրան, ով այս գրքի մարգարեության խոսքերը պահում է»* (Հայտն.22:7):

Հարսն ասում է միայն այն, ինչ Հոգին է բացահայտել Խոսքից. *«Եվ Հոգին ու հարսն ասում են. «Եկ»: Եվ լսողն էլ կասի. «Եկ»: Նա, ով ծարավ է, թող գա, և նա, ով կամենում է, թող կյանքի ջուրը ձրի առնի»* (h. 7):

Այնուհետև հնչում է վերջին նախազգուշացումը. *«Որովհետև ես վկայում եմ ամեն մեկին, ով լսում է այս գրքի մարգարեության խոսքերը: Եթե մեկը սրանց վրա բան ավելացնի, Աստված նրա վրա կավելացնի այն պատուհասները, որ գրված են այս գրքում»* (h. 18):

Բոլոր այն ուսմունքները, որոնք կոչվում են հատուկ հայտնություններ, բայց Աստվածաշունչը դրանց մասին ոչինչ չի վկայում, սուտ ուսմունքներ են և ավելացվել են Աստծո ավարտված վկայությանը: Այն, ինչ Աստվածաշնչում չի դավանվում, աստվածաշնչյան չէ, այն, ինչ գրված չէ աստվածային կտակում, Աստծուց չէ: Պողոսն արդեն գրել էր Գաղատ.1:8 համարում. *«Բայց եթե մենք էլ կամ երկնքից մի ուրիշ հրեշտակ նրանից տարբեր բան ավետարանի, քան մենք ձեզ ավետարանեցինք, նզովված լինի»*:

Նա, որ Աստծո Խոսքին ինչ-որ բան է ավելացնում, խաբված է, նա քարոզում է ուրիշ Հիսուս, ուրիշ Ավետարան, մոլորված է (2 Կորնթ. 11:3): Տերը երբեք սուտ ուսմունքներ սովորեցնողներին չի ասի. *«Եկե՛ք, ո՛վ իմ Հոր օրհնյալներ...»*: Դա բացարձակապես անհնարին է, որովհետև Աստված ճշմարիտ է, Նա լույսը խավարից զատեց: Որքան որ հաստատ է, որ Աստված ուղարկել է Իր ծառա և մարգարե Ուիլյամ Բրանհամին սուրբգրային պատգամով, նույնքան հաստատ է, որ մենք վերադարձել ենք Աստծուն և Նրա Խոսքին, որը սկզբում էր: Մեզ քարոզվել է Խոսքի մաքուր պատգամը, որից առաջացել է մաքուր Հարս-Խոսքը: Բոլոր նրանք, ովքեր հավատում են, թե ինչ է ասում Սուրբ Գիրքը, և ինչպես է ասում, իմաստուն կույսերից են: Ընտրյալները չեն կարող մոլորվել ոչ մի մեկնությունից: Նրանք Խոսքն են, և Խոսքը բնակվում է նրանց մեջ: Երանելի է այն քարոզիչը, որը կարող է ճշմարտապես ասել. *«Որովհետև, Տիրոջ Խոսքով ձեզ սա ասենք...»* (1 Թես. 4:15): Այդպիսի քարոզիչներին է

վերաբերում այս խոսքը. *«Մենք Աստծուց ենք: Նա, ով ճանաչում է Աստծուն, մեզ է լսում, նա, ով Աստծուց չէ, չի լսում մեզ: Այսպիսով ենք ճանաչում Ճշմարտության Հոգին և խաբեության հոգին»* (1 Հովհ.4: 6): Ամեն, ամեն:

Հոգով և Ճշմարտությամբ

Այսպես է ասում Տերը. *«Բայց ժամանակ կգա, և հիմա է, երբ ճշմարիտ երկրպագողները հոգով ու ճշմարտությամբ կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն իրեն այսպիսի երկրպագողների է ուզում: Աստված Հոգի է ու նրան երկրպագողները պիտի հոգով ու ճշմարտությամբ երկրպագեն»* (Հովհ.4:23,24):

Միայն նա, ով իսկապես ճշմարտության մեջ է, կարող է սրբանալ և երկրպագել Աստծուն: Տերն Ինքն աղոթել է Իրենների համար. *«Նրանց սուրբ արա քո ճշմարտությամբ. քո Խոսքը ճշմարտություն է»* (Հովհ.17:17):

1965 թվականի հունվարի 18-ի «Տարածայնության սերմը» քարոզում Բրանհամ եղբայրը, որպես ներածական խոսք, կարդաց երկու տարբեր սերմերի առակը (Մատթ. 13:24-30): 36-43 համարներում Տերը դրա նշանակությունը բացատրում է Իր աշակերտներին: Աստծո ճշմարիտ սերմը հայտնվում է որպես Թագավորության որդիներ, որպես ցորենի հատիկ, որը Տերն է ցանել և պահելու է Իր շտեմարանում (Մատթ. 3:12, Մատթ. 13:30): Տարածայնության սերմը՝ որոմը, ցանվել է թշնամու կողմից: Բրանհամ եղբայրը տեսիլքում տեսավ սպիտակ հագած սերմնացանին, որը բարի սերմ էր ցանում: Նրանից անմիջապես հետո եկավ սև հագուստով մեկը և որոմ ցանեց: Երկու սերմերն աճեցին և ստացան նույն անձրևը: Ինչպես որ Փրկագնիչն է մարմնով հայտնված Խոսքը, այնպես էլ փրկագնվածներն են Նրան ծառայող Խոսք-Սերմը (Սաղմոս 22:31, Եսայի 53:10): Բրանհամ եղբայրը բառացիորեն ասաց. «Այն ամենը, ինչ չի համապատասխանում Խոսքին, տարածայնության սերմ է»:

Ոչ մի սուտ չի գալիս ճշմարտությունից (1 Հովհ. 2:21): Նա, ով կապում է ճշմարիտ Աստծուն և Իր ուղարկած մարգարեներին տարբեր սուտ ուսմունքների հետ, որոնց մասին այստեղ չենք խոսի խորությամբ, բռնված է ստի ոգով: Ուիլյամ Բրանհամն Աստծուց ուղարկված մարդ էր: Բայց այսօր ի՞նչ են անում նրա ասածները մեջբերելով: Մարդուն ուղղված ցանկացած փառաբանություն հայհոյություն է և գարշելի է Աստծո առջև: Ճշմարիտ երկրպագողներն ամեն տեղ Աստծուն երկրպագում են միայն հոգով և ճշմարտությամբ:

Աստծուց ուղարկված ծառայողը կքարոզի միայն Խոսքը և ոչ թե համատեքստից հանված մեջբերումներ: 2 Տիմ. 4:2 համարում Պողոսը պատվիրում է իր գործընկեր Տիմոթեոսին քարոզել միայն Խոսքը: Եվ դրանից անմիջապես հետո գրում է. *«Որովհետև ժամանակ կգա, որ ողջամիտ վարդապետությունը չեն հանդուրժի, այլ իրենց հատուկ ցանկությունների համաձայն ուսուցիչներ կդիզեն իրենց վրա՝ իրենց ականջներին հաճելի եղածների համեմատ և իրենց ականջները ճշմարտությունից հետ կդարձնեն ու առասպելների հետևից գնալով կմոլորվեն»* (2 Տիմ.4:3, 4): Սա համապատասխանում է այն խոսքին, որը Տերն Ինքն է ասել. *«Սակայն իզուր են Ինձ պաշտում՝ մարդկանց պատվիրած բաներն իբրև վարդապետություն սովորեցնելով»* (Մատթ. 15:9):

Աստծո բոլոր ճշմարիտ ծառաները քարոզում են Խոսքը և բաժանում են հոգևոր կերակուրը, որը կապված է Աստծո կամքի հետ (Հովհ. 4:34): Մենք քարոզում ենք խաչյալ Հիսուս Քրիստոսին և լրիվ Ավետարանը որպես Աստծո զորություն (1 Կորնթ. 1:18), ինչպես քարոզել են առաքյալներն ու Բրանհամ եղբայրը: Ներկայումս այս ժամանակաշրջանի համար պատգամը, որը Եկեղեցու համար ամենակարևոր պատգամն է, հստակորեն հասնում է աշխարհով մեկ: Հայտնի է դառնում, թե ովքեր են Աստծուն պաշտում հոգով և ճշմարտությամբ, և ովքեր են իրենց մտքերում և աղոթքներում անցնում Աստծո կողքով, մոլորության մեջ լինելով:

Հավատք և հնազանդություն

«Մեր Տեր Հիսուս Քրիստոսի վերաբերյալ... որով շնորհ և առաքելություն ստացանք՝ ***Իր անվան համար հավատքի հնազանդություն քարոզելու բոլոր ազգերի մեջ»*** (Հռոմ. 1:5): Բոլոր ժամանակներում մարդիկ պետք է ընտրեին՝ ուզում են հավատալ, թե՞ անհավատությամբ մերժել այն, ինչ Տեր Աստված ասում է Իր ծառաներին, այն ինչ նրանք հաղորդում են Նրա կողմից: ԱՅՍՊԵՍ է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ խոսքը միշտ ուժի մեջ է. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. «Ով որ ընդունի նրան, ում ես կուղարկեմ, ինձ է ընդունում, իսկ ինձ ընդունողը ինձ ուղարկողին է ընդունում»* (Հովհ.13:20): Նաև՝ *«Հիշեցեք այն խոսքը, որ Ես ասացի ձեզ, թե ծառան իր Տիրոջից մեծ չէ. եթե Ինձ հալածեցին, ձեզ նույնպես պիտի հալածեն, եթե Իմ խոսքը պահեցին, ձերն էլ պիտի պահեն»* (Հովհ. 15:20): Երկնային կոչման հետ Եկեղեցու համար կապված է ամենամեծ պատասխանատվությունն Աստծո առաջ:

Աստված կարող է զղջալ մարդ ստեղծելու համար. *«Եվ Աստված տեսավ, որ մեծ է մարդկանց չարությունը երկրի վրա, և նրանց սրտի*

խորհուրդների բոլոր գաղափարները չար էին ամեն օր, այն ժամանակ Տերը զղջաց, որ մարդ ստեղծեց երկրի վրա և տրտմեց Իր սրտում» (Ծննդոց 6:5, 6): Բայց Նա չի կարող զղջալ Իր կոչման համար: Կոչման վերաբերյալ կարդում ենք Հռոմ.11:29 համարում. *«Որովհետև Աստծո պարգևներն ու կոչումն անդառնալի են»*:

Ելից 3-րդ և 4-րդ գլուխներում կարդում ենք Մովսեսի կոչման մասին, որին Տիրոջ հրեշտակը հայտնվեց վառվող մորենու մեջ: Դրա համար նա կարող էր ասել. *«Ձեր հայրերի Եհովա Աստվածը ինձ ձեզ մոտ ուղարկեց»* (Ելից 3:13): «Եվ Մովսեսը պատասխանեց և ասաց. *«Բայց ահա նրանք ինձ չեն հավատա, ոչ էլ իմ ձայնին կլսեն, որովհետև կասեն, թե Եհովան քեզ չի երևացել»* (Ելից 4:1): Միշտ կարևոր է ունկնդիրների հավատքը. *«Եվ եթե քեզ չհավատան և առաջին նշանի ձայնին չլսեն, այն ժամանակ մյուս նշանի ձայնին կհավատան»* (Ելից 4:8):

Բազմաթիվ դավանանքներում և կրոններում ամեն մարդ հավատում է ինչ-որ բանի: Նույնիսկ սատանան է հավատում և դողում (Հակոբ 2:19): Մինչդեռ Աստծո թագավորությունում կարևոր է հավատալ այն բանին, **ինչ Աստված իրոք ասել է և խոստացել**: Բրանհամ եղբոր համար նույնպես, ում ասվեց. «Եթե դու այնպես անես, որ մարդիկ քեզ հավատան և անկեղծորեն աղոթես, ոչինչ չի դիմադրի քո աղոթքին, նույնիսկ քաղցկեղը»: Բոլոր բժշկության հավաքույթներից առաջ երգում էին այս երգը. «Միայն հավատա, միայն հավատա, ամեն բան հնարավոր է հավատացողին»: Մատթ. 13:58-ում մեր Տիրոջ մասին կարդում ենք, որ իր ծննդավայրում *«շատ հրաշքներ չարեց նրանց անհավատության պատճառով»*:

Անհավատությունն առաջին մեղքն է և սկսվել է Եդեմի պարտեզից: Բրանհամ եղբայրն այդ մասին շատ է շեշտել: Ես ուզում եմ այստեղ երեք մեջբերում անել 1953, 1956 և 1960 թվականների քարոզներից:

«Ներիր մեր <u>անհավատության մեղքը</u>, որն էլ սկզբնական և իսկական մեղքն է: Ո՛վ Աստված, օգնիր մեզ այս երեկո լինել հավատարիմ և հավատալ» (1953 թ. մայիսի 9, Զոնսբորո):

«Թույլ տվեք ինձ դա ցույց տալ մեկ խոսքով: Երբ սատանան Հիսուս Քրիստոսին հանդիպեց առաջին անգամ, նա կասկածներ ուներ: Կասկածը միշտ գալիս է սատանայից: Այդպես հայտնվեց առաջին մեղքը: Ուրիշ մեղք չէր, կասկածն էր: <u>Անհավատությունն առաջին մեղքն է և մեղք է ինքնին</u>: Շնությունը, ծխելը, խմելը ոչ թե մեղքն են, այլ անհավատության հատկությունները» (1956 թ. հուլիսի 22, Շրիվպորտ):

«Տեսեք, սիրելի բարեկամներս, առաջին մեղքը անբարոյական կյանքը չէ, վիսկի խմելը չէ, շնությունը չէ: Դուք դրանք անում եք, որովհետև չեք հավատում: Դրանք անհավատության նշաններ են: Եթե իրոք հավատում եք, այդ բաները չեք անում: Կա միայն մեկ սկզբնական մեղք՝ անհավատությունը: Սուրբ Գիրքն ասում է.*«Ով որ չհավատա, կդատապարտվի»* (Մարկոս 16:16): (1960 թ. հունվարի 10, Թիֆթոն):

1963 թվականի մարտ ամսին կնիքների քարոզներից հետո Բրանհամ եղբայրն անդադար վկայակոչում էր Եվային, որը լսեց օձի ասածը: Հաճախ նա դա համեմատել է Հայտն. 22:18-19 համարներում գրվածի հետ. *«Որովհետև ես վկայում եմ ամեն մեկին, ով լսում է այս գրքի մարգարեության խոսքերը: Եթե մեկը սրանց վրա բան ավելացնի, Աստված նրա վրա կավելացնի այն պատուհասները, որ գրված են այս գրքում: Եվ եթե մեկն այս գրքի մարգարեության խոսքերից բան պակասեցնի, Աստված նրա բաժինը կպակասեցնի կյանքի գրքից, սուրբ քաղաքից և այս գրքում գրվածներից»*:

Սատանան գնաց Եվայի մոտ օձի կերպարանքով և կասկած ցանեց Ադամին ուղղված Տեր Աստծո խոսքերի հանդեպ. *«Իրա՞վ Աստված ասաց...»*: Գուցե նրան հարցրեց. «Դու իրո՞ք լսել ես, դու ներկա եղե՞լ ես»: Այդպիսով Եվան ընկավ սատանայի ազդեցության տակ: Պողոսը գրել է. *«Եվ Ադամը չխաբվեց, բայց կինը խաբվելով՝ մեղք գործեց»* (1Տիմ.2:14):

Խոսելով հավատքի մասին՝ մեր Տերն ասել է. *«Արդ, ես ձեզ ասացի. «Ձեր մեղքերի մեջ կմեռնեք, **որովհետև եթե չհավատաք, որ ես եմ, ձեր մեղքերի մեջ կմեռնեք»*** (Հովհ.8:24): Իր հարությունից հետո Նա հանդիմանեց Իր աշակերտներին անհավատության համար. *«Վերջում երևաց տասնմեկին, երբ նրանք սեղան էին նստած և հանդիմանեց իրենց **անհավատության** և կարծրասրտության համար, որովհետև չէին հավատացել նրանց, որ Իրեն տեսել էին հարություն առնելուց հետո»* (Մարկոս 16:14):

Անհավատությունը առաջին մեղքն է: Նա, ով Աստծուն չի հավատում, Նրան ստախոս է անում (Հռոմ. 3:4): Եբր. 3:12-ում կարդում ենք մի խիստ նախազգուշացում. *«Զգույշ եղեք, եղբայրներ, չլինի թե ձեզնից որևէ մեկի մեջ **անհավատության չար սիրտ լինի՝ կենդանի Աստծուց հեռանալով»***:

Իսրայելի ժողովրդի դուրս գալը Կարմիր ծովի միջոցով և նրանց գերբնական կերակրվելը մանանայով անապատում հզոր իրադարձություններ էին. *«**Հավատով** Կարմիր ծովից անցան, ինչպես ցամաքից, որը երբ եգիպտացիները փորձեցին անել, խեղդվեցին»* (Եբր. 11:29): Բայց ի՞նչ եղավ նրանցից շատերի վերջը. *«Բայց Աստված նրանցից շատերին*

չհավանեց, դրա համար էլ անապատում կործանվեցին... Եվ այդ ամենը նրանց իբրև օրինակ էր պատահում, բայց իբրև խրատ գրվեց մեզ, որ դարերի վերջին հասանք» (1 Կորնթ.10:5,11): Ճշմարիտ ինքնաքննության համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուրը կարդա 1 Կորնթ.10:1-15 համարները: Եբր. 3:19-ում դա ամփոփված է այս բառերով. *«Այսպես, տեսնում ենք, որ նրանք անհավատության պատճառով չկարողացան մտնել»*:

Նախ հավատքը, հետո՝ հնազանդությունը, որի վրա հանգչում է Աստծո բարեհաճությունը: Հավատքը հաղթանակ է, անհավատությունը՝ պարտություն: *«Որովհետև ինչպես որ մեկ մարդու <u>անհնազանդությամբ</u> շատերը մեղավոր եղան, այնպես էլ մեկի <u>հնազանդությամբ</u> շատերը արդար կլինեն»* (Հռոմ. 5:19): Նա, ով ուզում է ավելին իմանալ անհնազանդության հետևանքների մասին, կարող է կարդալ Հռոմ. 11-րդ գլխում:

Հավատքն ու հնազանդությունը մեզ կապում են Աստծո հետ, մինչդեռ անհավատությունն ու անհնազանդությունը բաժանում են Աստծուց. *«Որովհետև ապստամբությունը կախարդության մեղքի պես և անհնազանդությունը կռապաշտության պես է»* (1 Թագ.15:23):

Այժմ բացահայտվում է, թե ով է իսկապես Աստծուն հավատում այնպես, ինչպես Աբրահամը հավատաց: *«Ինչպես գրված է. թե՝ «Քեզ շատ ազգերի հայր դարձրի», Նրա առջև Ում նա հավատաց, Աստծո, որ կենդանացնում է մեռելներին և չեղած բաները կանչում է եղածի պես»:* (Հռոմ. 4:18, Ծննդոց 17:5): Կարող ենք հավատալ միայն այն դեպքում, երբ Աստված է խոսում մարդու հետ Իր Խոսքով: Եթե մեկն անհավատության իշխանության տակ է, ուրեմն նա դեռ չարի ազդեցության տակ է:

<u>Աբրահամը հավատաց Աստծուն</u> (Հռոմ. 4:17): «Եվ Նա ասաց. *«Եկող տարի ստույգ քեզ մոտ կվերադառնամ, կյանքի ժամանակի համաձայն, և ահա քո կինը՝ Սառան, մի որդի կունենա»* (Ծննդոց 18:10): Նա ունեցավ խոստացված որդուն: <u>Աբրահամը հնազանդվեց:</u> Աստված ասաց. *«Վերցրու քո միրելի միամորիկ որդուն՝ Իսահակին և Մորիայի երկիր գնա և այնտեղ նրան ողջակիզիր այն լեռներից մեկի վրա, որ Ես քեզ կասեմ»* (Ծննդոց 22:2): *«Մտածելով, որ Աստված կարող է մեռելներից էլ հարություն տալ, ուստի օրինակի համար էլ ընդունեց նրան»* (Եբր. 11:19):

«Տեսնու՞մ ես, որ հավատքը գործի հետ մեկտեղ էր ու այդ գործերով էր, որ հավատքը կատարյալ եղավ» (Հակոբ 2:22):

Եվայի համար անհավատությունը, որը ցանվեց կասկածի միջոցով, տարավ գայթակղության, հետո Ադամը ճանաչեց իր կնոջը՝ Եվային: Արդյունքում հայտնվեցին երկու տարբեր սերմեր: Երկուսն էլ կրոնավոր էին, երկուսն էլ հավատում էին նույն Աստծուն, երկուսն էլ զոհասեղան

էին պատրաստում և զոհ մատուցում, բայց հենց ծննդյան օրվանից տարբեր էին: Աստված բարեհաճությամբ նայեց Աբելին և նրա զոհին, որը գառնուկ էր, բայց մերժեց Կայենին և նրա զոհը, որը երկրի պտուղ էր (Ծննդոց 4:1-8):

Պատգամի բոլոր հավատացյալները գիտեն, թե ինչ է կատարվել Եդեմի պարտեզում: Բայց հիմա խոսքը մեր ժամանակների մասին է: Սատանան նաև կասկած է ցանել Բրանհամ եղբորն ասված խոսքերի հանդեպ, այսինքն, որ պատգամն է նախորդելու Քրիստոսի երկրորդ գալստին: Մեզ համար, որ հիմա ապրում ենք, գրված է. *«Քանի որ սա այն պատվիրանն է, որ դուք ի սկզբանե լսել եք, որ պետք է սիրեք միմյանց: Եվ ոչ թե Կայենի պես, որ չարից էր և սպանեց իր եղբորը: Եվ ինչու՞ սպանեց նրան, որովհետև իր գործերը չար էին, իսկ եղբոր գործերը՝ արդար»* (1 Հովհ. 3:11,12): Աստվածային սերը կատարելության կապն է (Կողոս. 3:14, 1 Կորնթ. 13):

Աստծո բարեհաճությունը պետք է հանգչի բոլոր նրանց վրա, ովքեր ուզում են հափշտակվել, ինչպես եղավ Ենովքի հետ, որը քայլում էր Աստծո հետ (Ծննդոց 5:24, Եբր. 11:5): Պսակվում է վերջը, ոչ թե սկիզբը (2 Տիմ. 4:8):

Ռեֆորմացիայի հինգհարյուրամյա հոբելյանը

2016 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2017 թվականի հոկտեմբերի 31-ը բողոքական եկեղեցին տոնում է Լյութերի սկսած Ռեֆորմացիայի հինգհարյուրամյա հոբելյանը: Ռեֆորմացիայի հոբելյանը տոնվում է ոչ միայն Գերմանիայում, այլև ողջ աշխարհում: Նույնիսկ կաթոլիկ եկեղեցին է միանում տոնակատարությանը. եպիսկոպոսների գերմանական համաժողովի նախագահ Ռեյնհարդ Մարքսը և Գերմանիայի ավետարանական եկեղեցիների խորհրդի նախագահ Հեյնրիխ Բեդֆորդ Շտրոմը պայմանավորվել են, որ երկու եկեղեցիները հոբելյանը տոնեն միասին, մի շարք համատեղ արարողություններով: Դրանով պետք է շեշտվի «հավատքի միությունը»:

Համաշխարհային մակարդակով Ռեֆորմացիայի հինգհարյուրամյա հոբելյանի տոնակատարությունները սկսվել են Լունդ և Մալմո քաղաքներում՝ Շվեդիայում, այն երկրում, որտեղ յոթանասուն տարի առաջ հիմնվել է համաշխարհային լյութերական միությունը: Համաշխարհային լյութերական միության նախագահ եպիսկոպոս Մունիբ Յունանը և կաթոլիկ եկեղեցու առաջնորդը նշել են այդ հոբելյանը Մալմոյի մարզադաշտում տասը հազար մասնակիցների հետ: Լունդի լյութերական

տաճարում էկումենիկ աղոթքի կապակցությամբ Ֆրանցիսկոս պապը կարճ ելույթ է ունեցել, որը սկսել է Հովհ. 15:4 համարով. *«Մնացեք Իմ մեջ, և Ես ձեր մեջ»*: 2016 թվականի հոկտեմբերի 31-ին Ֆրանցիսկոս պապը եպիսկոպոս Յունանի հետ միասին հռչակագիր են ստորագրել՝ կոչ անելով համատեղ հաղորդության: Համատեղ հռչակագիրը նույնպես սկսվում է Հովհ. 15:4 համարով. *«Մնացեք Իմ մեջ, և Ես ձեր մեջ: Ինչպես ճյուղը չի կարող ինքն իրենից պտուղ բերել, եթե որթի վրա չմնա, այնպես էլ դուք չեք կարող, եթե Իմ մեջ չմնաք»* (Հովհ. 15:4): Այստեղ խոսվում է հաշտության և միմյանց հասցված վերքերի բժշկության մասին, այն մասին, որ իրենց միավորողն ավելի ուժեղ է, քան բաժանողը: Երկու կողմերը պարտավորվում են վերացնել խոչընդոտները, որ հասնեն կատարյալ էկումենիկ միությանը: Նպատակը ընդհանուր Տերունական ընթրիքն է: Հայտարարվել է, որ համատեղ ջանքերով ուզում են բաց լինել «եռամեկ Աստծո» զորության համար:

Կոնկրետ և ամբողջական միությունը պետք է շեշտվի՝ միացնելով կաթոլիկ եվխարիստիան բողոքական Տերունական ընթրիքի հետ: Մինչդեռ այդ երկուսը բոլորովին տարբեր են, ինչպես կարելի է դա տեսնել Հեյդելբերգի կատեխիզիսում (բարեփոխված եկեղեցիներում ամենից շատ օգտագործված կատեխիզիսն է):

Հարց 80

Ի՞նչ տարբերություն կա Տերունական ընթրիքի և կաթոլիկ պատարագի միջև:

Տերունական ընթրիքը մեզ վկայում է, որ մենք ստացել ենք մեր բոլոր մեղքերի կատարյալ ներումը Հիսուս Քրիստոսի մեկ զոհաբերությամբ, որն Ինքն իրականացրեց մեկընդմիշտ խաչի վրա (Եբր. 7:26, 9:12, 25-28, 10:10, 12-14, Հովհ. 19:30, Մատթ. 26:28, Ղուկաս 22:19) և որ Սուրբ Հոգու միջոցով միացել ենք Քրիստոսի հետ (1 Կորնթ. 6:17, 10:16), ով գտնվում է մարմնով երկնքում, Հոր աջ կողմում (Եբր. 1:3, 8:1) և ուզում է, որ այնտեղ երկրպագենք Իրեն (Հովհ. 4:21-24, 20:17, Ղուկաս 24:52, Գործք 7:55-56, Կողոս. 3:1, Փիլիպ. 3:20, 1 Թես. 1:10):

Իսկ պատարագը, հակառակը, մեզ սովորեցնում է, որ մեռածներն ու ողջերը չունեն մեղքերի թողություն Քրիստոսի չարչարանքների շնորհիվ, այլ Քրիստոսը ամեն օր զոհաբերվում է նրանց համար պատարագն անցկացնող քահանաների միջոցով: Ավելին, այն սովորեցնում է, որ Քրիստոսը մարմնապես գտնվում է հացի և գինու մեջ և հետևաբար, այնտեղ պետք է երկրպագվի: Ուստի պատարագը ըստ էության ուրիշ բան

չէ, քան Քրիստոսի մեկ անգամվա զոհաբերության և չարչարանքների մերժում և անիծյալ կռապաշտություն:

Արդյո՞ք լյութերական հռետորները հավատում են Լյութերի քարոզած ուսմունքներին: Արդյո՞ք նրանցից որևէ մեկը կարդացել է Դանիելի մարգարեության ներածական խոսքը Լյութերի կողմից գրված, 1545 թվականի հրատարակության մեջ: Արդյո՞ք որևէ մեկը հասկացել է թե ինչ մարգարեական և հեռատեսական տեսիլք է ունեցել Լյութերն այն ժամանակ:

Իր նախաբանում նա հստակորեն նկարագրում է իրար հաջորդող համաշխարհային թագավորությունները, որոնց մասին խոսվում է Դանիել մարգարեի գրքում՝ բաբելոնյան թագավորությունը, մարաց-պարսից թագավորությունը, հունաց թագավորությունը և հռոմեական թագավորությունը, որը սկսվեց Քրիստոսից առաջ 63 թվականին:

Բոլոր կրոնական հրատարակությունները, նույնիսկ օրաթերթերն ու շաբաթաթերթերը անդրադառնում են Ռեֆորմացիայի թեմային: Մի՞թե վերջնական նպատակը բոլոր համաշխարհային կրոնների միավորումը չէ Հռոմում՝ յոթ բլուրների վրա գտնվող քաղաքում, Վատիկանում: Մի՞թե հռոմեական պայմանագրերը չեն ստորագրվել Հռոմում, 1957 թվականի մարտի 25-ին: Արդյո՞ք մոտ է այդքան սպասված նոր համաշխարհային կարգը: Այս ամենը պետք է ասվի, որովհետև խոսքը աստվածաշնչյան մարգարեության իրականացման մասին է: Մենք հասել ենք վերջին ժամանակներին, և ամեն բան կատարվում է ճիշտ այնպես, ինչպես կանխասվել է վերջին ժամանակների վերաբերյալ:

Իր քահանայապետական աղոթքում Փրկագնիչն, անկասկած, չի աղոթել երկու եկեղեցիների կամ բոլոր կրոնների միաբանության համար, այլ փրկագնվածների միաբանության. *«Ես Քո խոսքը նրանց տվեցի, և աշխարհը նրանց ատեց, որովհետև նրանք աշխարհից չեն, ինչպես Ես աշխարհից չեմ... Ես նրանց մեջ, և Դու իմ մեջ, որ նրանք կատարյալ լինեն միության մեջ»* (Հովհ. 17:14, 23): Նա Որթն է, և բոլոր վերստին ծնված հավատացյալները ճյուղերն են, որոնց մեջ աստվածային կյանքը հայտնվում է որպես Որթի պտուղ: Փրկագնվածների միությունը կատարվում է Քրիստոսով, ով Գլուխն է Եկեղեցու, որը հիմնվել է երկու հազար տարի առաջ, Երուսաղեմում, Պենտեկոստեի օրը, համաձայն Գործք առաքելոց 2-րդ գլխի: Իսկ հռոմեական կայսրության պետական եկեղեցին հիմնվել է Քրիստոսից հետո 325 թվականին, Նիկիայի տիեզերաժողովի ժամանակ: Լյութերի, Մելանխտոնի, Ցվիլգլիի, Կալվինի և նրանց նա-

խորդների՝ Ուիքլիֆի և Հուսի միջոցով բերված Ռեֆորմացիան այն ժամանակ հոգևոր արթնության մեծ առաջխաղացում էր: Դրանց հաջորդող մեթոդական, մկրտական և մեր ժամանակներում հոգեգալստական արթնություններում Աստծո Հոգին նույնպես գործում էր: Աստվածաշնչյան հավատացյալները չեն վերադառնում Հռոմ կամ Նիկիա, այլ Երուսաղեմ: Պետք է վերադառնալ Աստծուն և Նրա Խոսքին: Քրիստոսի վերադարձից առաջ վերջին պատգամով հավատացյալները վերադառնում են ճշմարիտ քրիստոնեությանը: Մենք հասել ենք դուրս գալու, վերականգնվելու և պատրաստվելու ժամանակներին, մենք կարող ենք բաժին ունենալ այն գործում, որ Աստված անում է ներկայումս և մենք սպասում ենք Քրիստոսի մոտալուտ վերադարձին:

Հրեաների վերադարձը իրենց երկիր

Հրեա ժողովրդի պատմությունը ցավոտ անցյալ ունի: 1948 թվականից նորից գոյություն ունի հրեական պետությունը, այն բանից հետո, երբ ավելի քան երկու հազար տարի առաջ ժողովուրդը ցրվել էր աշխարհով մեկ այն երկրից, որն Աստված էր տվել: Դարեր շարունակ հրեաները համարվել են տարօրինակ փոքրամասնություն և կրոնական համայնք: Նրանք պետք է ապրեին ցանկապատված թաղամասերում: Նրանց մերժում էին ճանաչել որպես ժողովուրդ: 1897 թվականին Բազելում առաջին համաշխարհային սիոնիստական կոնգրեսի ժամանակ Թեոդոր Հերցլի մասնակցությամբ նրանք նորից ճանաչվեցին որպես ազգ և պահանջեցին իրենց սեփական պետությունն ունենալու իրավունքը:

1917 թվականի նոյեմբերի 2-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Լորդ Արթուր Ձեյմս Բալֆուրը սիոնիստական շարժմանը հաղորդեց իր կառավարության որոշումն այն մասին, որ նա ուզում է օգնել «Պաղեստինում հրեաների համար ազգային օջախ» ստեղծելու հարցում:

1922 թվականին Մեծ Բրիտանիան ստացավ Պաղեստինը կառավարելու մանդատ: 1947 թվականի նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան որոշում ընդունեց՝ «Բրիտանական մանդատի տարածքը պետք է բաժանվի երկու՝ հրեական և արաբական պետությունների միջև»: 1948 թվականի մայիսի 14-ին Դավիդ բեն Գուրիոնը հռչակեց Իսրայելի պետության հիմնադրումը:

«Երբ Իսրայելը հիմնադրվեց 1948 թվականին, երկրի բնակչությունը կազմում էր ութ հարյուր վեց հազար մարդ: 68 տարի հետո, 2016

թվականին Անկախության օրը բնակչության թիվը գերազանցել է ութ միլիոն հինգ հարյուր քսաներկու հազարը ըստ պաշտոնական վիճակագրության» (Israel Today, հունիս 2016):

Աստված բազմաթիվ խոստումներ է տվել Իսրայելին, խոստումներ նաև խոստացված երկրի հետ կապված: Աստվածաշնչում Երուսաղեմը նշված է 780 անգամ, իսկ Սիոն լեռը՝ 157 անգամ, ու միշտ Իսրայելի հետ կապված: Նրանց ցրվելն ու վերադարձը նույնպես կանխասվել են աստվածաշնչյան մարգարեություններում: Ահա այդ թեմայի վերաբերյալ մի քանի աստվածաշնչյան հատված.

«Եվ նրանք կընկնեն սրի բերանով և գերի կտարվեն բոլոր ազգերի մեջ, և Երուսաղեմը հեթանոսների կողմից ոտնակոխ պիտի լինի, մինչև հեթանոսների ժամանակները լրանան» (Ղուկաս 21:24):

«Կենդանի է Տերը, որ Իսրայելի տան սերունդը դուրս հանեց ու առաջնորդեց հյուսիսի երկրից և այն բոլոր երկրներից, ուր նրանք քշել էր, և նրանք պիտի բնակվեն իրենց երկրում» (Երեմիա 23:8):

«...սիրտդ պողոտայի՝ քո գնացած ճանապարհի վրա դիր, վերադարձիր, ո՛վ Իսրայելի կույս, ետ դարձիր դեպի քո այս քաղաքները» (Երեմիա 31:21):

«Ուստի ասա. «Տեր Աստվածն այսպես է ասում. «Ձեզ ժողովուրդների միջից հավաքելու եմ այն երկրներից, որտեղ դուք ցրված էիք, և ձեզ եմ տալու Իսրայելի երկիրը»»» (Եզեկ. 11:17):

«Եվ ձեզ պիտի առնեմ ազգերի միջից և ժողովեմ ձեզ ամեն երկրներից և ձեզ բերեմ ձեր հողը» (Եզեկ.36:24):

«Ուստի կլինի, որ երբ Տերն Իր ամբողջ գործը կատարի Սիոն լեռան վրա և Երուսաղեմում...» (Ես. 10:12):

«Եվ պիտի ամաչի լուսինը, ու արեգակը պատկառի, երբ թագավորի Զորաց Տերը Սիոն սարի վրա և Երուսաղեմում և պատիվ կլինի իր ծերերի առաջ» (Ես.24:23):

Ովսե 9:10 համարում թզենին Իսրայելի խորհրդապատկեր է. *«Խաղողի պես գտա ես անապատում Իսրայելին. թզենիի առաջին երախայրիի պես տեսա ձեր հայրերին…»*:

«Առակը թզենուց սովորեցեք. երբ նրա ճյուղերն արդեն փափկել են, ու տերևը բուսել է, իմանում եք, որ ամառը մոտ է» (Մատթ.24:32, Մարկոս 13:28):

Մենք տեսնում ենք, թե ինչպես են մեր աչքերի առջև իրականանում Իսրայելի հետ կապված զարգացումները: Բալֆուրի նամակը պատմության մեջ մտել է «Բալֆուրի հռչակագիր» անունով և ներկայացնում է Իսրայելի պետության հիմնադրման հիմքը: Ռամալլահում պաղեստինյան իշխանությունը հայտարարել է, որ ուզում է պայքար սկսել Բալֆուրի հռչակագրի դեմ, 2016 թվականի նոյեմբերի 2-ից մինչև 2017 թվականի նոյեմբերի 2-ը՝ հարյուրերորդ տարեդարձը: Նրանք դատական հայց են ներկայացնում և Լոնդոնից փոխհատուցում պահանջում:

Մենք հավատում ենք, որ Աստված Իր ժողովրդին բերել է խոստացված երկիրը, որ իրականացնի վերջին ժամանակների համար Իր ծրագիրը: Մեղադրանքը, որը բերվել է էթնիկ խմբի կողմից, որը ձևավորվել է միայն 1968 թվականին (այսինքն՝ Բալֆուրի հռչակագրից 51 տարի անց) ոչինչ չի փոխի:

Աստված դատաստան է հռչակել բոլոր ազգերի դեմ, որոնք դուրս կգան Իսրայելի դեմ. *«Կհավաքեմ նաև բոլոր ազգերին ու նրանց կիջեցնեմ Հոսափատի հովիտը և նրանց այնտեղ կդատեմ՝ Իմ ժողովրդի ու Իմ ժառանգություն Իսրայելի համար, որին ցրեցին ազգերի մեջ ու Իմ երկիրը բաժանեցին»* (Հոել 3:2):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերջին բանաձևը, որով Տաճարի լեռը ճանաչել է որպես «պաղեստինյան մշակութային ժառանգություն», իսկ Իսրայելին անվանել է «զավթող իշխանություն», ցույց է տալիս մարդկանց կուրության աստիճանը: Նախ, Տաճարի լեռը Հին Կտակարանում հայտնի է եղել որպես Մորիա լեռ (Ծննդոց 22:2), հետագայում այն անվանել են հեբուսացի Ոռնանի կալ: Դավիթը գնեց ողջ լեռը վեց հարյուր սիկղ ոսկով (1 Մնաց. 21:25) և հայտարարեց 1 Մնաց. 22:1 համարում. *«Սա է Տեր Աստծո Տունը, ու սա է Իսրայելի ողջակեզի զոհասեղանը»*: Այստեղ էր գտնվում Երուսաղեմի երկրորդ տաճարը, մինչև հռոմեացիների կողմից կործանումը Քրիստոսից հետո 70 թվականին: Կիրականանա այն խոստումը, ըստ որի երրորդ տաճարը վերակառուցվելու է նույն հիմքի վրա, որտեղ գտնվել են առաջին և երկրորդ տաճարները, որովհետև Հայտն. 11:2-ում երկու մարգարեների ծառայության հետ կապված նորակառույց տաճարը պետք է չափվի:

Մենք ապրում ենք այն ժամանակաշրջանում, երբ մեր աչքերի առջև իրականանում են աստվածաշնչյան մարգարեությունները, եթե նույնիսկ

աշխարհը դա չի զանազանում: Երանի՜ նրան, ով ճանաչում է ժամանակների նշանը՝ վերջի՛ն ժամանակների:

Աստված հավատարիմ է Իր բոլոր գործերում

Փրկության պատմության մեջ Բրանհամ եղբոր ծառայությունը մեծ նշանակություն է ունեցել Հիսուս Քրիստոսի Եկեղեցու համար: Նա ուղարկվել է պատգամով, որպես խոստացված մարգարե (Մաղաքիա 4:5, 6), ինչը մեր Տերը հաստատեց Մատթ. 17:11 և Մարկոս 9:12 համարներում: Նա պատասխանեց. *«Իրոք, նախ Եղիան պիտի գա և ամեն բան վերականգնի»*: Եղիայի ծառայությունը տեսություն չի եղել, այլ իրական: Նա հավաքեց Աստծո ժողովրդին Կարմեղոս լեռան վրա, տասներկու քարերով վերանորոգեց քանդված զոհասեղանը և այնտեղ դրեց զոհը: Այնուհետև աղոթեց, և Տերը պատասխանեց տեսանելի ձևով, և Իսրայելի զավակների սրտերը վերադարձան Աստծուն (3 Թագ. 18:21, 40):

Ես ականատես և վկա եմ եղել այն արտասովոր ծառայության, որն Աստված տվել է Բրանհամ եղբորը: Հավատարիմ Տերը վերցրեց Իր պատգամաբերին, բայց աստվածաշնչյան պատգամը շարունակվում է քարոզվել: Այն, որ Աստված ինձ հանձնարարություն է տվել դրա հետ կապված, իմ որոշումը չէ: Նա ինձ չի հարցրել, թե արդյոք ուզում եմ գնալ:

Երախտագիտությամբ հետադարձ հայացք եմ գցում Տիրոջ ծառայության մեջ անցկացրած օրհնյալ տարվա վրա: Աստված հավատարիմ է: Նա շնորհք և զորություն է տվել Իր Խոսքը քարոզելու և աշխարհով մեկ տանելու համար: Այո՛, Նա հաստատել է Իր տված հանձնարարությունը, և բոլոր դրան հավատացողները ուրախանում են: Տերը կանխասել էր, որ լինելու է Իր Խոսքը լսելու քաղց և ծարավ (Ամովս 8:11): 1976 թվականի սեպտեմբերի 19-ին Տերն Ինքն ինձ պատվիրեց. «Իմ ծառա, Ես քեզ ընտրել եմ Մատթ. 24:45-47-ում գրվածի համաձայն, որ կերակուր բաժանես»: Այդ խոսքն իրականացավ մեր աչքերի առաջ, և երբեք Տիրոջ սեղանն այդքան ճոխ կերպով բացված չի եղել, ինչպես մեր ժամանակներում:

Իրականանում են նաև գերբնական ամպի միջից Բրանհամ եղբորն ասված խոսքերը. **«Ինչպես Հովհաննես Մկրտիչն է ուղարկվել Քրիստոսի առաջին գալստից առաջ, այնպես էլ դու կուղարկվես մի պատգամով, որը նախորդելու է Քրիստոսի երկրորդ գալստին»**: Պատգամի միջոցով հավատարիմ Տերը վերականգնեց ամեն բան: Տասներկու առաքյալների վարդապետությունը նորից քարոզվեց (Գործք 2:42): Ինչպես պատգամը ամբողջովին տեղ գտավ Խոսքում, այնպես էլ ճշմարիտ

հավատացյալներն են մնում Խոսքի մեջ, մինչև ամեն բան վերականգնվի Եկեղեցում ճիշտ այնպես, ինչպես եղել է սկզբնական Եկեղեցում: Շուտով երկնային Փեսան կգա և Իր հարսին կտանի Իր հետ:

Աստծո շնորհքով ես հավատարիմ մնացի աստվածային կոչմանը՝ չնայած չար զրպարտություններին և անձնական կյանքում ունեցած ծանր փորձություններին: Այն, ինչ Տերն ասել է Եսայի 54:17 համարում Իր ուղարկածների վերաբերյալ, միշտ ուժի մեջ է. *«Քո դեմ ստեղծված ոչ մի զենք հաջողություն չի ունենալու, և ամեն մի լեզու, որ դատաստանի է ելնելու քո դեմ, պիտի դատապարտվի: Սա է Տիրոջ ծառաների ժառանգությունը, և նրանց արդարությունն Ինձանից է,– ասում է Տերը»* (Եսայի 54:17):

Ես կարիք չունեմ հետ վերցնելու իմ խոսքերը, որոնք ասել եմ ութ հազարից ավելի քարոզներում կամ գրել գրքույկներում ու շրջաբերական նամակներում: Ողջ սրտով շնորհակալություն եմ հայտնում եղբայրներին, որոնք ինձ հետ բաժանում են հոգևոր կերակուրը: Ի՜նչ առաձնաշնորհում է գիտակցաբար ապրել Քրիստոսի վերադարձից առաջ վերջին փուլը: Եվ գիշեր-ցերեկ անձնվեր արված աշխատանքը իզուր չի լինելու (Փիլիպ. 2:16):

Աղոթում եմ, որ ոչ ոք չկորցնի այս թանկարժեք ժամանակը առանց հաշտվելու Աստծո և իր մերձավորների հետ: Դեռ շնորհքի ժամանակն է, և ամեն մարդ կարող է գալ Աստծուն և կյանքը նվիրել Տիրոջը: Դեռ քարոզվում է մեղքերի թողությունը միսիոներական հանձնարարության համաձայն: Դեռ կան մարդիկ, որոնք դարձի են գալիս և մկրտվում են սուրբգրային ձևով:

Թող այս վերջին փուլը դառնա հոբելյանական տարի բոլոր ճշմարիտ հավատացյալների համար (Ղևտ. 25:8-13):

Այս լուսանկարն արվել է 2016 թվականի օգոստոսի 15-ին: Ետևի պլանում աշխարհի քարտեզն է, որտեղ նշագրված են այն բազմաթիվ երկրները, որտեղ ես քարոզել եմ: Անցել է ուղիղ 61 տարի, երբ 1955 թվականի օգոստոսի 15-ին առաջին անգամ ողջունեցի Բրանհամ եղբորը առաջին երկու հավաքույթներից հետո:

61 տարի է անցել նրա հեռանալուց հետո: Այդ տարիների ընթացքում ես անձամբ վերջին պատգամը տարել եմ ճանապարհորդելով 160 երկրներում: Բազմաթիվ հեռուստահաղորդումների և Կրեֆելդի միսիոներական կենտրոնի՝ ամեն ամսվա առաջին շաբաթ-կիրակին տեղի ունեցող մեր հավաքույթների համացանցային հեռարձակման միջոցով Աստծո Խոսքը հասցնում ենք բոլոր մայրցամաքներում բնակվող հազարավոր հավատացյալներին: Բացի այդ 8200 DVD և 1150 CD սկավառակներ են ուղարկվում ամեն ամիս: Ամեն ամիս ուղարկած գրքույկների, շրջաբերական նամակների և քարոզների թիվը հասնում է հարյուրավոր հազարների:

Լրիվ Ավետարանը քարոզվել է բոլոր ժողովուրդներին որպես վկայություն. այդպիսով իրականանում է Մատթ. 24:14-ում գրվածը: Հիմա վերջը կարող է գալ և գալու է, մինչդեռ ոչ ոք չգիտի ո՛չ օրը, ո՛չ ժամը: Ես կարող եմ գոհությամբ ասել. «Հավատարիմ Տեր, հիմա խաղաղությամբ արձակիր Քո ծառային, որովհետև իմ աչքերը տեսան այս ժամանակի համար տրված խոստման իրականացումը»: Տերն Ինքը կավարտի Իր

Խոսքը Իր Հարս-Եկեղեցու հետ: Փեսան նրան տուն կտանի և Իր առջև կներկայացնի այն Հարսին, որն անբիծ ու անարատ է (Եփես. 5:27):

Միայն կատարյալ սերը, որը կապված է Աստծո յուրաքանչյուր Խոսքի հանդեպ կենդանի հավատքով, կմտնի փառքի մեջ: Բոլոր հավատացող ընտրյալների համար Աստծո յուրաքանչյուր Խոսքը այո և ամեն է և հասնում է իրականացմանը:

«Արդ գոհություն Աստծուն, որ միշտ մեզ հաղթության է առաջնորդում Քրիստոսում և Իր գիտության բույրը մեր միջոցով հայտնում է ամեն տեղ» (2 Կորնթ.2:14):

Թող ամենակարող Աստծո օրհնությունը հանգչի բոլոր նրանց վրա, ովքեր հավատում են Աստծո Խոսքին:

Անկեղծ շնորհակալություն եմ հայտնում նրանց, ովքեր հիշում են ինձ իմ աղոթքներում, համաշխարհային նշանակություն ունեցող այս միսիոներական գործի համար: Թող հավատարիմ Աստված վարձահատույց լինի բոլոր նրանց, ովքեր այս գործին աջակցում են իրենց ընծաներով: Ուզում եմ շնորհակալություն հայտնել նաև նրանց, ովքեր աշխատում են միսիոներական կենտրոնում: Այո՛, թող Աստված օրհնի բոլոր նրանց, ովքեր բազմաթիվ երկրներում քարոզում են այս թանկագին Խոսքը: Եվ այս ցուցակի վերջում, բայց ոչ վերջին հերթին ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր եղբայրներին, որոնք քարոզում են Կրեֆելդի եկեղեցում: Թող Տերն օրհնի բոլոր նրանց, ովքեր սիրում են Նրա հայտնությունը: Ամեն:

2017 թվականի համար սրտանց մաղթում ենք ձեզ Աստծո տեսանելի օրհնությունները, որ քաղաքում կամ երկրում ապրելիս լինեք: Բոլորս բարձրացնենք մեր գլուխները, որովհետև գիտենք, որ մեր մարմնի փրկությունը մոտ է: Մարանաթա:

Գործելով Աստծո հանձնարարությամբ՝



Հետադարձ հայացք 2016 թվականին

Այս տարի նույնպես Աստծո շնորհքով արվեցին միսիոներական ճանապարհորդություններ: Դրանք տեղի ունեցան երկրի բոլոր անկյուններում. Ազորյան կղզիներում, Ֆիլիպիններում, Եթովպիայում, Մոզամբիկում, հարավային Աֆրիկայում, Զիմբաբվեում, Բենինում, Բուրկինա Ֆասոյում և Նիգերիայում, Պակիստանում և Գվադելուպայում, նաև Ռումինիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Անգլիայում և ամեն ամսվա վերջին կիրակին՝ Ցյուրիխում:



Պակիստանում հավաքույթների իրավերը հաղորդվեց հանրային հեռուստատեսությամբ: Լահորի մարզադաշտում երեք հազար հոգի եկավ լսելու Աստծո Խոսքը գերմանացի քարոզչի միջոցով: Պակիստանի կառավարությունում մարդու իրավունքների նախարար Կամրան Մայքլ եղբայրը ողջունեց եկեղեցուն, իսկ Իրֆան Մայքլ եղբայրը թարգմանիչն էր:

Լուսանկարում պատկերված է Պակիստանի Լահոր քաղաքում գտնվող մի եկեղեցու հավաքույթը:

Կրեֆելդի միսիոներական կենտրոնում 2016 թվականի դեկտեմբերի 4-ի հավաքույթը:

Սիրելի Տեր, հիշիր այն Ուխտը, որ արել ես մեզ հետ, այն Արյունը, որ թափել ես մեզ համար, խոստումները, որ տվել ես մեզ, և Քո Շնորհքով հավիտենական կյանք շնորհիր Քո ժառանգորդներին: